ISSN 0002-306X. Изв. НАН РА и ГИУА. Сер. ТН. 2001. Т. LIV, № 3.

ԿՈՍՏԱՆ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԿՈՍՏԱՆՅԱՆ

75 - ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Լրացավ նշանավոր գիտնական, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս ԿՈՍՏԱՆ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ծննդյան 75 և մանկավարժական գործունեության 50-ամյակը:

Կ.Կոստանյանը ծնվել է 1926 թվականի սեպտեմբերի 1-ին, Էջմիածին քաղաքում: 1948-ին ավարտել է ԵրՊի-ի քիմիկատեխնոլոգիական ֆակուլտետը, ապա ընդունվել Գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրան: Ուսուցումն անցկացրել է ականավոր գիտնականներ, ԽՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Ն. Կաչալովի և պրոֆեսոր Կ. Եվստրոպևի ղեկավարությամբ, Լենինգրադի տեխնոլոգիական ինստիտուտում, որտեղ և 1952 թվականին պաշտպանել է «Նատրիում - կալցիում - մագնեզիում - ալյումինասիլիկատային ապակիների էլեկտրահաղորդականության կախումը ջերմաստիճանից և բաղադրությունից» թեմայով թեկնածուական ատենախոսությունը:

Այնուհետև երիտասարդ գիտնականն աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ քիմիայի ինստիտուտում և ամբողջությամբ նվիրվել ինստիտուտի առջև դրված կարևորագույն հարցերին՝ հանրապետության նոր զարգացող ապակու արդյունաբերությունը տեղական հումքով ապահովելու և էլեկտրաէներգիան ապակու եփման համար օգտագործելու խնդիրների լուծմանը, որոնք նրա թեկնածուական ատենախոսության տրամաբանական շարունակությունն էին:

Հետազոտությունների արդյունքները երկար սպասել չտվեցին. սկսած 50-ական թվականներից՝ Կ.Կոստանյանը համամիութենական խորհրդակցություններում բազմիցս հանդես է եկել հալված ապակիների էլեկտրահաղորդականությանը, ապակեկերպ նյութերի և ապակիների էլեկտրական հատկություններին նվիրված զեկուցումներով՝ արժանանալով լայն ճանաչման և մասնագետների բարձր գնահատականին:

Կ.Կոստանյանի գործունեությանը բնորոշ են գիտական բարձր մակարդակն ու գործնական նպատակաուղղվածությունը: Ապակու էլեկտրաեփման ուղղությամբ հանրապետությունում դեռևս 30-ական թվականներից տարվող աշխատանքներն ամփոփվեցին 1962-ին լույս տեսած «Ապակու էլեկտրաեփումը»

մենագրության մեջ, որը համաշխարհային տեխնիկական գրականության մեջ ապակու էլեկտրաեփմանը նվիրված առաջին գիրքն էր:

ՀՀ ԳԱԱ քիմիայի ինստիտուտի անօրգանական քիմիայի սեկտորի հիման վրա 1957-ին կազմակերպված Ժողտնտխորհի քիմիայի գիտահետազոտական ինստիտուտում 1959 թվականին ձևավորվեց ապակու քիմիայի և տեխնոլոգիայի լաբորատորիան, որի վարիչը դարձավ երիտասարդ, բայց արդեն լայն ճանաչում գտած գիտնականը:

Ապակու էլեկտրաեփման հայկական խմբի աշխատանքները 60-ական թվականների սկզբներին արդեն միջազգային ճանաչում էին ստացել. այդ հետազոտություններին ու դրանց իրականացմանը ծանոթանալու համար բազմիցս Երևան են եկել նախկին Խորհրդային Միության, Չեխոսլովակիայի, Գերմանիայի և այլ երկրների հետազոտողներ, ինժեներ-մասնագետներ: Պատահական չէ, որ այդ տարիներին հատկապես Երևանում էին կազմակերպվում մի շարք հանրապետական և միութենական նշանակության գիտաժողովներ:

Ամփոփելով հալված ապակիների էլեկտրահաղորդականության ուսումնասիրություններին նվիրված իր գիտահետազոտական աշխատանքները՝ Կ. Կոստանյանը, 1968-ին պաշտպանեց □Հալված սիլիկատային և բորատային ապակիների էլեկտրահաղորդականության կախումը ջերմաստիճանից և բաղադրությունից□ թեմայով դոկտորական ատենախոսությունը:

60-ական թվականների վերջերին քիմիայի հետազոտական ինստիտուտը, մի շարք գերատեսչական փոփոխությունների ենթարկվելով, կրկին անցավ ՀՀ ԳԱԱ-ի ենթակայությանը, և ինստիտուտի մի քանի լաբորատորիաների հիման վրա կազմակերպվեց ԽՍՀՄ էլեկտրոնային արդյունաբերության նախարարության էլեկտրավակուումային ապակու գիտահետազոտական ինստիտուտի Երևանի մասնաճյուղը, որի տնօրեն նշանակվեց Կ.Կոստանյանը: Մասնաճյուղի առջև դրված բազմաբնույթ և կարևոր խնդիրները զգալիորեն ընդլայնեցին գիտնականի հետազոտությունների շրջանակները. նոր գերմանատային և խալկոգենիդային, կապարային և այլ ապակիների բաղադրությունների ու տեխնոլոգիաների մշակում, սիտալների, ապակու ներկերի, թաղանթների, բյուրեղական նյութերի, մենաբյուրեղների ստացում և, որ ամենագլխավորն է, գիտական արդյունքների ներդրում արտադրության մեջ: Տեսական ուսումնասիրություններն առավել կարևորվեցին, երբ մասնաճյուղի կազմում 1981-ին կազմակերպվեց փորձնական գործարան: Կարճ ժամանակում Կ. Կոստանյանի ղեկավարությամբ մասնաճյուղն իր փորձնական գործարանով դարձավ Միության՝ ապակու քիմիայի և տեխնոլոգիայի ուղղությամբ կատարվող աշխատանքների իրականացման հետազոտական կենտրոններից մեկը:

Դեռևս 1955-ից Կ. Կոստանյանը կապված էր Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի հետ, որտեղ կարդում էր «Սիլիկատների ֆիզիկական քիմիա» դասընթացը: Այդ դասախոսությունների հիման վրա 1967-ին հրատարակվեց «Սիլիցիումի քիմիա և սիլիկատների ֆիզիկական քիմիա» ուսումնական ձեռնարկը, որով կրթվել է սիլիկատային տեխնոլոգիայի մասնագետ-ինժեներների մի ողջ սերունդ:1977-ին Կ.Կոստանյանը ընտրվել է ՀԽՍՀ ԳԱԱ-ի թղթակից-անդամ:

Աշխատանքների կատարման հետ մեկտեղ, Կ.Կոստանյանի կողմից դաստիարակվում էր բարձր որակավորում ունեցող հետազոտողների մի խումբ, որոնցից շատերն արդեն առաջատար մասնագետներ էին: Կ.Կոստանյանի ղեկավարությամբ պաշտպանվել են 25 թեկնածուական ատենախոսություններ:

1984-1992 թվականներին անվանի գիտնականը եղել է ԽՍՀՄ ԳԱԱ-ի "Физика и химия стекла" ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ, 1989-ին՝ Ապակու միջազգային XV կոնգրեսի կազմկոմիտեի, իսկ 1989-1992 թվականներին՝ ԽՍՀՄ Նախարարների խորհրդին առընթեր գիտության և տեխնիկայի բնագավառում Լենինյան և Պետական մրցանակներ շնորհող կոմիտեի անդամ:

1986-ից Կ.Կոստանյանն անցնում է մանկավարժական աշխատանքի, որպես ԵրՊի-ի քիմիկատեխնոլոգիական ֆակուլտետի «Սիլիկատների տեխնոլոգիա» ամբիոնի վարիչ, իսկ 1992-ից՝ ամբիոնի պրոֆեսոր:

Այս տարիներին նա գրել և տպագրության է պատրաստել մի շարք մենագրություններ և դասագրքեր,այդ թվում՝ «Վենետիկյան ապակի» մենագրությունը և «Սիլիկատների և ոչ մետաղական դժվարահալ նյութերի ֆիզիկական քիմիա» դասագիրքը:Կ.Կոստանյանը 1996-ից ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս է, ավելի քան 300 գիտական հոդվածների, գրքերի, հեղինակային վկայականների հեղինակ, միջազգային ճանաչում ունեցող ականավոր գիտնական, գիտության կազմակերպիչ և գիտական ղեկավար:
Այսօր էլ վաստակաշատ գիտնականն ու մանկավարժն իրեն հատուկ եռանդով ու նվիրումով շարունակում է հայրենանվեր գործունեությունը: Ներկայումս նա "ՄՀՏԼ"-ի շրջանակներում կատարվող երկու աշխատանքների գիտական ղեկավար է, ՀՊՃՀ-ի՝ գիտական աստիճաններ շնորհող 057 մասնագիտական խորհրդի նախագահը:

Տեղեկագրի խմբագրական կոլեգիան և բազմաթիվ գործընկերները, շնորհավորելով ականավոր գիտնականին ծննդյան 75-ամյակի առթիվ, մաղթում են նրան քաջառողջություն, երկար տարիների բեղմնավոր ու հայրենանվեր գործունեություն: